

У В РА Ч А  
ԲԺՇԿԻ ՄՈՏ

С л о в а р ь

- բժիշկ [бэжишк] - врач; доктор; բժշկի [бэжэшки] - врача; к врачу; за врачом (посылать)  
 քանի օր է, ինչ - вот уже несколько дней(, как)  
 լիվ չեմ գգում - мне нездоровится, чувствую себя плохо (неважно)  
 հիվանդ *пр., с* - больной; нездоровый  
 հիվանդանալ - заболеть; болеть  
 դիմել - обращаться (к)  
 գանգալվել - жаловаться (на)  
 ցավել - болеть (вызывать чувство боли)  
 (դա) ինչի՞ց է - отчего (с чего) это?  
 վերջերս - в последнее время  
 անընդհատ - постоянно, то и дело, все; непрерывно  
 գլխացավ - головная боль  
 գլխալուրդ [галхалэтуйт] - головокружение  
 ցավ - боль; փորի ցավ (փորացավ) боль в животе; ստամոքիի ցավ - боль в желудке  
 նույնիսկ - даже  
 գարկերակ - пульс  
 ջերմաչափ - термометр  
 ջերմություն - температура  
 չափել - мерить  
 ատամի ցավ (ատամնացավ) - зубная боль  
 ատամնաբույժ - стоматолог, дантист  
 ուղարկել - посылать; отсылать; пересылать  
 բարեբախտաբար - к счастью  
 առողջ [а'охч] - здоровый  
 մի *mod.* - -ка  
 արյուն - кровь; (արյան) ճնշում - 1. (кровяное) давление 2. гипертония  
 կարիք ունենալ՝ գգալ - нуждаться; понадобится  
 դեղ - лекарство  
 (դուրս) գրել, նշանակել - выписывать (лекарство)  
 դեղատուն - аптека  
 մի քանի օրից - через несколько дней  
 փսի - инъекция, укол; (փսի) արվել [сэрэскэл] - делать инъекцию...  
 արվում [сэрэскуп] - инъекция, укол  
 ամեն դեպքում - во всяком случае  
 ակնաբույժ - окулист, глазной врач  
 գերհոգնած - переутомленный  
 գերհոգնածություն - переутомление

առաջանալ, առաջ գալ - возникать; вызываться

դրանից - от (из-за) этого

ոչ թե..., այլ... - не..., а...

Կողմ - сторона

ներքև - вниз; ապելի ներքև - ниже

սիրտը խառնել - тошнить

սրտխառնուք [сартхайнук] - тошнота

դրա համար - за этим

վիրաբույժ - хирург

ստուգել - проверять

ստուգում - проверка

վստահ եմ - (я) уверен(а)

Կույր աղիք - 1. аппендикс, слепая кишка 2. аппендицит

վիրահատել - оперировать; վիրահատվել - ? (IV,14)

վիրահատություն - операция

ապացուցել - доказывать

հիվանդանոց - больница; հիվանդանոց փառվել - лечь в

больницу; госпитализироваться; հիվանդանոց փառվեցնել -

положить в больницу...; հիվանդանոցից դուրս գրվել -

выписываться из больницы

մի՛ մտածիր (մի՛ մտածեք), մի՛ հուզվիր (մի՛ հուզվեք) - не волнуйся! (не волнуйтесь!)

վտանգավոր - опасный

հասարակ - простой

մեր օրերում - в наши дни

բուժել - лечить; բուժվել - ?

լավանալ, առողջանալ - поправляться, выздоравливать

վերադառնալ - возвращаться

հույս տալ - обнадеживать

Աստված ձայնդ (Ձեր ձայնը) լսի - да услышит тебя (Вас) Бог!

ամաչել - стесняться; стыдиться

վճար [վճար] - плата

առողջություն - здоровья тебе (Вам)!, будь(те) здоров(а,- ы)!

— Զանի օր է, ինչ (քանի օր է՝) լավ չեմ գգում. կարծեք թե հիվանդ եմ (հիվանդացել եմ):

— Вот уже несколько дней, как я себя плохо чувствую (мне нездоровится): кажется, я заболела.

Բժշկի է դիմում (գնում):

(Она) обращается (идет) к врачу.

— Ինչի՞ց եք գանգատվում, տիկին, Ձեր որտե՞ղն է ցավում,— հարցնում է բժիշկ Ալթունյանը:

— На что жалуетесь, мадам, где у Вас болит?— ...

— Չգիտեմ ինչի՞ց է, բժիշկ. բայց վերջերս գլուխս անընդհատ ցավում է (անընդհատ գլխացավ ունեմ):

— Не знаю от чего это, доктор, но в последнее время (моя) голова то и дело болит (у меня постоянно головная боль).

Երբեմն նույնիսկ գլխապտույտ եմ ունենում:  
Иногда бывает даже головокружение.

Բժիշկը զարկերակն է հաշվում և ջերմաչափով ջերմու-  
թյունը չափելուց հետո ասում է.

Врач считает пульс и после того, как измеряет температуру тер-  
мометром, говорит:

— Ձեր ատամը ցավո՞ւմ է (ատամի ցավ՝ ատամնացավ ու-  
նե՞ք): Ձեզ ատամնաբույժի մոտ ուղարկե՞մ:

— У Вас зуб болит (у Вас есть зубная боль)? Послать ли мне  
Вас к зубному врачу?

— Ո՛հ, բժիշկ: Բարեբախտաբար ատամներս առողջ են.  
Փանջ Աստծո, ատամի ցավ երբեք չեմ ունեցել (ատամս երբեք  
չի ցավել):

— ... К счастью, зубы у меня (досл.: мои зубы) здоровые; ...

— Ձեր (արյան) ճնշումը մի չափեմ:

— Измерю-ка Ваше (кровеное) давление.

Ուա է. Ձեր ճնշումը բավական բարձր է: Չուցե արյունն  
անալիզի տանելու կարիք զգաք:

Вот оно; ... Может быть, Вам понадобится сдать кровь на  
анализ.

Ղեղեր է դուրս գրում (նշանակում):  
Выписывает лекарства.

— Այս դեղերը մոտիկ դեղատնից առեք և օրը երեք անգամ  
ընդունեցեք, ուտելուց առաջ:

— ... в ближайшей аптеке и примите ...

Մի քանի օրից եթե չօգնեն, նորից կգաք: Չուցե մի քանի  
ատեղ սրսկվեք [сәрսե՜ձ]:

— Если через несколько дней они не помогут, ... Может,  
получите несколько уколов.

Ամեն դեպքում խորհուրդ եմ տալիս ակնաբույժին էլ դիմել:  
Во всяком случае, советую обратиться и к окулисту.

Շատ եք գործում: Եթե գործելուց Ձեր աչքերը գերհոգնած  
լինեն, դրանից (գերհոգնածությունից) կարող է ճնշումը բար-  
ձրանալ, գլխացավ առաջանալ (առաջ գալ):

Вы много вяжете? Если Ваши глаза переутомлены от вязания,  
от (из-за) этого (от переутомления)...

— Ճիշտ եք. աղջիկներին համար շատ եմ գործում:

— Вы правы: ...

Անպայման կդիմեմ ակնաբույժին: Ձեզ որքա՞ն պետք է  
վճարեմ: ?

— 20.000 դրամ միայն, այսինքն՝ մոտավորապես 40 դոլար: ?

— Ներեցե՞ք, բժիշկ, մի բան էլ հարցնեմ: ?

Այս երկու օր է՝ (= ?) ամուսնուս փորն է ցավում (ամուսինս փորի ցավ ունի):

... у моего мужа болит живот (у мужа боли в животе).

— Չուցե ստամոքսն է:

— А может (быть), желудок?

— Ոչ, ստամոքսը չէ, այլ փորն է:

— Нет, это не желудок, а живот.

Իրականում նույնիսկ ոչ թե փորը, այլ աջ կողմն է:

... это даже не животе, а на правый бок (в правом боку).

Եվ ոչ միայն այստեղ, այլև ավելի ներքև:

И не только здесь, но (а также) и ниже.

Ու դեռ սիրտն էլ խառնում է (սրտխառնուք է ունենում):

Его еще и тошнит (у него бывает тошнота).

— Դրա համար վիրաբույժին պետք է դիմեք. կատուգի, ստուգումից հետո ինքը կորոշի:

— С этим надо обратиться к хирургу; (он) проверит и после проверки сам определит (решит что делать).

Սակայն համարյա վստահ եմ, որ կույր աղիքն է:

Однако (я) почти уверен, что это аппендицит.

Եթե կույր աղիքը լինի, անպայման վիրահատության կարիք կունենա (կզգա):

Если это - аппендикс, (то) непременно понадобится операция (досл.: он будет нуждаться в операции).

Պետք է հիվանդանոց պառկի (հիվանդանոց պառկեցնել):

Он должен лечь в больницу (его надо будет положить в больницу).

Ամսիջապես պետք է վիրահատվի:

Он немедленно должен быть оперирован.

— Օ, դա վաղ թե դժվար վիրահատություն լինի: ?

— Ոչ, տիկին, մի՛ մտածեք (մի՛ հուզվեք). մեր օրերում դա վտանգավոր չէ, հասարակ վիրահատություն է:

— Нет, мадам, не волнуйтесь (не переживайте): ... это неопасно, в наши дни...

Կտեսնեք, մեկ (մի) շաբաթից Ձեր ամուսինը կրուժվի, կլավանա (կառողջանա), հիվանդանոցից դուրս կգրվի և տուն կվերադառնա:

(Вот) увидите, Ваш муж через неделю поправится (выздоровеет), выпишется из больницы и вернется домой.

— Շնորհակալ եմ, բժիշկ, Ռուբ ինձ հույս տվեցիք: Աստված Ձեր ձայնը լսի:

— ..., Вы меня обнадежили. Да услышит Вас Бог!

— Ամաչում եմ, բժիշկ, բայց մի բան էլ եմ հարցնելու:

— (Я) стесняюсь, ...

— Վերջերս հաճախ իմ սիրտն էլ է խառնում. ինչի՞ց կլինի: ?

— Ռոա համար արդեն գինեկոլոգին պետք է դիմեք: ?

— Շնորհակալություն, բժիշկ: Ռուբ ինձ շատ օգնեցիք: Ահա Ձեր վարձը: ?

— Առողջությունն Ձեզ ու Ձեր ամուսնուն: ?

### Упражнения

#### 1. Переведите:

Լավ չգգալու (հիվանդ լինելու) պատճառով (по причине) մեկ (մի) շաբաթ հիվանդանոց է պառկելու ընդհանուր (общий) անալիզի պետք է ենթարկվի (подвергаться): Ոչ միայն արյան, այլև ուրիշ անալիզների կարիք է զգալու (ունենալու): Պետք է պարզեն (выяснить)՝ թե՞ թե՛ լուրջ (серьезный) հիվանդ է: Վերջերս նրա ստամոքսը սաստիկ ցավում էր: Արդյոք սրկվելու կարիք պիտի լինի: Իսկ վիրահատության: Չէ՞ որ վիրահատությունը շատ թանկ է նստում: Փող որտեղի՞ց կգտնի (находить): Ունեցած ամբողջ փողը դրա համար է վճարելու:

Երբեմն մտածում էր, որ դրանք ոչ թե բժիշկներ են, այլ թալան-ցիներ (грабитель):

#### 2. Дополните:

Աչքի բժիշկը կոչվում է .....

Ատամի բժիշկը կոչվում է .....

Վերքերի (рана) բժիշկը կոչվում է .....

Վանանց բժիշկը կոչվում է .....

#### 3. Дополните предложения:

Ոչ թե դասընկերս է, .....

Ոչ թե դպրոց եմ գնում (հաճախում), .....

Ոչ թե սև գրիչ եմ ուզում, .....

Ոչ միայն բանջարեղեն եմ գնելու (առնելու), .....

Ոչ միայն քաջ (храбрый) զինվոր (բանակային) է, .....

Տո՛ւն ես գնալու, (սու? - VII) .....

Վաթո՞վ սուրճ ես սիրում, (սու?) .....

Եղբայրդ սովորո՞ւմ է, (սու?) .....

Ոչ ես ունեմ, (X) .....

Ոչ օղի եմ օգտագործում, .....

Ոչ կարմիր (красная) գրիչն է գրում, .....

4. Переведите:

ՎԻՐԱՎՈՐ՝ ՇՈՒՆԸ՝

Յուրտ ձմեռ է: Ձյուն է եկել,  
 Չետիկը՝ ծածկել:<sup>1</sup>  
 Տղա-աղջիկ բակ են ելել,  
 Սկսել աղմկել:<sup>2</sup>

Տղաները կես են թողնում  
 Խաղերն երջանիկ, ...  
 Շանը հիվանդանոց տանում  
 Իրենց տան մոտիկ:

Հանկարծ՝ բակ է մտնում շունը՝  
 Ուղից վիրավոր.  
 Արյուն է որ լավ հոսում է՝  
 Արա վերջից խոր:<sup>3</sup>

Բարի՞ բժիշկը խնամքով՝  
 Կապում է՝ վերքը.  
 Շունն ուզում է լիզել՝ սիրով՝  
 Բժշկի ձեռքը:

...Սյուա օրն նորից բակ է մտնում  
 Շունը այն ծանոթ՝,  
 Իր մի ընկերոջն է բերում  
 Ուրը արյունոտ՝...

5. Скажите по-армянски, где у вас болит (помимо выученных вами слов, можете употребить также: թոքեր (легкие), սիրտ (сердце), լյարդ (печень), երիկամ (почка), կող (бок). Конечно же, совсем не обязательно, чтобы у вас что-нибудь болело.

1. раненый 2. собака; пес 3. земля (грунт) 4. покрывать 5. [агмөкал] шуметь 6. вдруг; внезапно  
 7. идти (досл.: темь) 8. глубокий 9. добрый 10. заботливо (с заботой) 11. переагизывать 12. лизать  
 13. с любовью; с удовольствием, охотно 14. знакомый 15. окровавленный

У ПАРИКМАХЕРА  
ՎԱՐՍԱՎԻՐԻ ՄՈՏ

Словарь

- վարսավիր - парикмахер  
 վարսավիրանոց - парикмахерская  
 երկարել - становиться длинным (длинными, длиннее), удлиняться  
 կտրել, խուզել, մազերը սարքել - стричь  
 Աստճու բարին, բարին Աստված - формула, высказываемая в ответ на բարև  
 չես (չեք) երևում - тебя (Вас) не видать (невидно)  
 իր ատճ. + вопр. в отриц. форме - неужели?, неужто?; ... же не ...?  
 զբաղված լինել - быть занятым  
 սովորաբար - обычно  
 գլխին վրա - с удовольствием!  
 հասկանալ - понимать  
 ծագում - происхождение; ծագումով - родом, по происхождению  
 Արևմտյան [արեւմտյան] Հայաստան - Западная Армения  
 պատմել - рассказывать  
 երկիր - родная сторона (в потерянной Западной Армении)  
 խլել - отнимать  
 հավանաբար - вероятно  
 մոռանալ - забывать  
 շատ անգամներ - много раз; часто  
 ինչ անեմ անենք - что (ж) делать (мне, нам)!; ну и что (ж)!  
 հոգի - душа; հոգով (հոգեպես) - в душе; духовно; душевно  
 թեթևանալ - становиться легким (легче)  
 ամեն անգամ - каждый (всякий) раз  
 հաճույք - удовольствие; наслаждение  
 կրկնություն [կրկնույն] - повторение  
 անո՛ւշ (լինի) - формула, высказываемая собеседнику: 1) после бритья 2) после еды или выпивки очередной рюмки спиртного 3) в ответ на շնորհակալություն за еду, за поданный кофе (ср. VI) и т. д.  
 օճանելիք - парфюмерия  
 ցանել - пульверизовать, брызгать  
 մի քիչ առաջ - только что; недавно; чуть раньше  
 առաջից (առջևից) *п/л* - спереди; перед; впереди  
 կարող է պատահել - может быть  
 կանանց սրահ - женский салон  
 մարմնով (մարմնապես), ֆիզիկապես - физически

Մազերս բազական երկարել են: Դրանք կտրելու (խուզելու) ժամանակը վաղուց եկել է:

Мои волосы стали довольно длинными. Давно пора их постричь.

Այսօր անպայման վարսավիրի մոտ (վարսավիրանոց) եմ գնալու և մազերս սարքել եմ տալու:

Сегодня обязательно пойду к парикмахеру (в парикмахерскую) и постригусь.

— Բարև՛ Ձեզ, վարպետ Գրիգոր: ?

— Աստծու բարին (բարին Աստված), պարոն Վարդան: Այս որտե՞ղ էիք. վաղուց չեք երևում: Ինչ էի՞ք հիվանդացել:

— ... Давно Вас не было видно. Неужто заболели?

— Չէ, փառք Աստծո, հիվանդ չեմ, առողջ եմ: ?

Խանութի գործերով մի քիչ զբաղված էի:

Я был немножко занят...

Ուզում եմ, որ մազերս սարքեք (= ?), այսինքն՝ թե՛ մազերս սարքեցեք, թե՛ միանգամից երեսս սափրեցեք:

..., то есть, постригите и заодно побрейте меня (досл.: мое лицо).

Թե՛ն սովորաբար տանն եմ սափրվում:

Хотя обычно (я) бреюсь дома.

— Գլխին վրա: Իրամեցեք նստեցեք:

— С удовольствием! ...

Ուզում եք, որ Ձեր մազերը կարճ կտրեմ, թե՛ երկար: ?

— Ճիշտն ասած՝ ո՛չ շատ կարճ, ո՛չ էլ շատ երկար: ?

— Ինչպե՞ս եմ: Ձեր գլուխը մի քիչ բարձրացրեք խնորեմ:

Այդպես, բազական է:

— (Я Вас) понимаю (понял). ...

Վարպետ Գրիգորը մի ազնիվ հայ է, ծագումով Արևմտյան Իջևանտանից:

Мастер Григор - благородный армянин, родом из Западной Армении.

Եա և՛ իր գործն է անում, և՛ ինձ հետ հաճելի զրուցում է (զրույց է անում): ?

Պատմում է իր մասին, 1947-ին Սիրիայից Իջևանտան գալու մասին, Երկրի մասին, որ թուրքերը խլեցին 1915-ին՝

Рассказывает о себе, о своем приезде (о своей репатриации) из Сирии в Армению в 1947г., о родной стороне, которую турки отняли (захватили) в 1915 (г.),



... հավանաբար մոռանալով, որ նույն պատմություններն ինձ շատ անգամներ է պատմել:

... забывая (забыв), вероятно, что ...

Ինչ անենք. արդեն երիտասարդ չէ: Պատմելով հոգին (հոգով, հոգեպես) թեթևանում է:

Что ж делать (ну и что ж)! ... Рассказывая, (он тем самым) облегчает душу.

Վարպետ Գրիգորն սկսում է ինձ սափրել՝ շարունակելով իր քաղցր պատմությունները, ?

... որոնք թեև կրկնություն են, բայց ամեն անգամ հանույթով եմ լսում:

... которые хотя (хоть) и повторяются (досл.: повторения), но каждый раз (я их) слушаю с удовольствием.

Վերջացնելուց հետո ասում է. ?

— Անո՛ւշ (լինի): Ուզո՞ւմ եք, որ օծանելիք ցանեմ:

— На здоровье! Хотите, (я) одеколоном побрызгаю?

— Ո՛չ, շնորհակալ եմ: Վարպետ, պետք է հիշեիք, որ օծանելիք չեմ օգտագործում, ուղղակի չեմ սիրում: ?

Վճարելուց հետո պատրաստվում եմ վարսավիրանոցից դուրս գալու: ?

Վարպետը, հանկարծ մի բան հիշելով, ասում է.

Мастер, вспомнив вдруг что-то, говорит:

— Մի քիչ առաջ Ձեր տիկինը խանութիս առաջից (առջևից) արագ անցավ էր. կարծեք թե մի տեղ էր շտապում:

— Ваша супруга только что быстро прошла мимо моего магазина; кажется, (она) куда-то спешила.

— Այո՛, կարող է պատահել: Ինքն էլ այսօր կանանց սրահ էր գնալու. մազերը պետք է հարդարել տար:

— Да, может быть. Она (сама) должна была сегодня пойти в женский салон: должна была (дать) уложить волосы.

Ինչ որ է, ցտեսություն:

Впрочем (как бы то ни было), до свидания!

— Ցտեսություն, պարոն Վարդան: Ձեր տիկնոջը կբարևեք: ?

— Անպայման: Դուք էլ ձերոնց բարևեցեք: ?

Վարսավիրանոցից դուրս եմ գալիս՝ թեթևացած ոչ միայն ֆիզիկապես (մարմնապես), այլև մանավանդ հոգեպես (հոգով):

Выхожу из парикмахерской, облегченный не только физически, но и особенно духовно.

Таблица 46

- а. պատմել рассказывать - պատմելով рассказывая; рассказав  
 б. մոռանալ забывать - մոռանալով забывая; забыв

Таблица 47

- կարել шить - կարել տալ давать сшить  
 կարդալ читать - կարդալ տալ давать читать  
 նվագել играть - նվագել տալ заставлять играть

Прим. 1.- Приведенные формы каузатива синонимичны тем, что даны на таблице 24 (XI). Напр.: պատմել ждать - պատմեցնել = պատմել տալ давать (заставлять) ждать. հասկանալ понимать - հասկացնել = հասկանալ տալ давать понять. Считается стилистически неправильным совмещать эти формы в употреблении (или պատմեցնել, или պատմել տալ). Каузатив почти любого глагола можно образовать с помощью տալ. Но каузатив определенного количества глаголов (например, таких, как приведенные на таблице) может быть образован исключительно с помощью տալ.

Все глаголы данной конструкции спрягаются согласно модели "в" на таблице 8 (II).

### Упражнения

#### 1. Переведите:

Այս երեկո ձեր տուն եմ գալու և պատմելու եմ իմ պլանների (= ?) մասին:

Այն առավոտ առաջին ժամին դասարան չեմ մտել: Ինչ կարող էի անել, երբ բավական ուշացել էի:

Իմ հոր մեքենային ամեն անգամ մի բան պատահում է (случаться, бывать):

Այդ երեկո միայն կինոնկարների մասին էին խոսում: Հավանաբար ուրիշ հետաքրքիր նյութ (թեմա տեմա) չկար:

Էլ (այլևս [այլաես] больше) նրանց տուն չեմ այցելելու:

Ծնողներս, փառք Աստծո, հազար ինը հարյուր տասնհինգին փրկվել են ([բարեզլան] спаслись; уцелели):

Նրանք երկրի ո՞ր բաղադրից կամ գյուղից (село; деревня) էին:

2. Составьте предложения, употребляя (օգտագործելով) слова в нужной форме: երես, դեմք, մասին, սովորաբար, հանկարծ, մի քիչ արագ, շարունակել.

#### 3. Скажите по-армянски:

записывая, продолжая, беседуя, говоря, бывая, начиная, ожидая, вставая, одевая, умывая.

Т Е Л Е Ф О Н Н Ы Й Р А З Г О В О Р  
Հ Ե Ռ Ա Մ Ն Ա Ս Ա Յ Ի Ն Խ Ո Ս Ա Շ Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Словарь

- հեռախոսային** - телефонный  
**խոսակցություն** - разговор  
**հեռախոս** - телефон; **հեռախոսով** - по телефону  
**զանգահարել** - звонить  
**մոտենալ** - подходить; приближаться  
**լափող** - трубка  
**վերցնել** - снимать  
**հավարել** - набирать  
**կարելի է** - можно  
**կանչել** - звать; вызывать  
**մի րոպե** - одну минуту!  
**պատահել** - случаться; **ի՞նչ է պատահել, ի՞նչ կա** - что случилось (стряслось)?; **ի՞նչ կա որ** - (а) в чем дело?  
**հակառակ նրան՝ այն բանին, որ** - несмотря на то, что  
**ցանկանալ** - хотеть; желать  
**կինոթատրոն** - кинотеатр  
**համերգ** - концерт  
**հնարավոր է** - возможно; **հնարավոր չէ, անհնարին է** - невозможно  
**ժամադրվել [жамадәрвэл]** - назначать свидание (встречу)  
**դասախոսություն** - лекция  
**ցավել** - сожалеть  
**մշակութային միջոցառում** - культурное мероприятие  
**մշակույթ** - культура  
**նվիրել** - посвящать; **նվիրված** - посвященный  
**միջև, արանքում** - между  
**բ՛ար** - куда?  
**կինոնկար [киноնәкар]** - (кино)картина  
**բարեկամություն** - дружба  
**սկիզբ** - начало; **սկզբից [скәзбиц] մինչև վերջ** - от начала до конца  
**հետաքրքրություն [һәтәкәркәруион]** - интерес; **հետաքրքրությամբ** - с интересом  
**սեր** - любовь; **(ամենայն՝ մեծ) սիրով** - с (большим, преобладающим) удовольствием!  
**թող աստուծա** - пусть, пускай; да  
**հաճույք ստանալ** - получать удовольствие; наслаждаться  
**այստեղից** - отсюда; **այդտեղից** - оттуда; **այնտեղից** - оттуда (от того далекого места; ср.: այս... - VI)  
**պայմանավորվել** - договариваться  
**վա՛յ** - ой!  
**անջատել** - отключать; **անջատվել** - ? (IV,14)  
**սեսեսես** *свод. + вопр.* - интересно (выражения неопределенности)  
**միջքաղաքային** - 1. *пр.* междугородный 2. *с* междугородная  
**ծայր** - конец  
**հեռախոսազանգ** - телефонный звонок  
**ընդհատել [әһһатәл]** - прерывать

Ազատ ժամանակ ունեմ. որոշում եմ ընկերուիում գանգա-  
հարել: ?

Մտտենում եմ հեռախոսին, վերցնում լափողը և համարը  
հավաքում:

— Подхожу к телефону, снимаю трубку и набираю номер.

— Ալո, բարև Ձեզ: ?

— Բարև Ձեզ, ո՞ւմ եք ուզում:

— ... Кого Вам надо? (Вам кого?; ծով.: Кого Вы хотите?)

— Ներեցեք, Անահիտին կարելի՞ է (հեռախոսի մոտ կանչել):

— Извините, можно Анаит (позвать к телефону)?

— Խնդրեմ, հիմա, մի րոպե: ?

— Ալո, ո՞վ է: ?

— Անահիտ, բարև, ես եմ, Անդրանիկը: ?

— Բարև, Անդրանիկ, ի՞նչ է պատահել (ի՞նչ կա):

— ..., что случилось?

— Ոչինչ չի պատահել: Ուղղակի ցանկանում էի (ուզում էի)  
հարցնել, այս երեկո ի՞նչ ես անելու (ի՞նչ ունես անելու):

— ... Я просто хотел спросить: ...

— Ինչո՞ւ ես հարցնում, ի՞նչ կա որ:

— ..., в чем дело?

— Եթե ազատ ժամանակ ունես, առաջարկում եմ կինոթատ-  
րոն (համերգի, դիսկո կամ մի ուրիշ տեղ) գնալ:

— ... я предлагаю вместе пойти в кинотеатр (на концерт, в  
дискотеку или куда-нибудь).

— Չնայած (հավառակ նրան՝ այն բանին, որ) շատ եմ  
ցանկանում, չեմ կարող.

— Несмотря на то, что я очень хочу, ...:

... ծնողներիս հետ տեղ եմ գնալու. նախօրոք ժամադրվել  
ենք:

.....: заранее назначили свидание.

— Իսկ վա՞ղը: ?

— Ճատ եմ ցավում. վաղը նոյնպես հնարավոր չէ  
(անհնարին է). համալսարան եմ գնալու՝ հետաքրքիր մի դա-  
սախոսություն լսելու:

— Весьма сожалею; ...невозможно: ..., послушать интересную  
лекцию.

— Ինչի՞ մասին է: ?

— Հետաքրքիր մշակութային միջոցառում է՝ նվիրված հայ (հայկական) մշակույթի պատմությանը:

— Интересное культурное мероприятие, посвященное истории армянской культуры.

— Իսկ վաղը չէ մյուս օրը հնարավոր է:

— ... возможно?

— Ի՞նչ օր է: ?

— Շաբաթ: ?

— Շաբաթ օրը, ժամը չորս(և) անց կեսի և յոթի միջև (արանքում) ազատ եմ. կարող եմ գնալ: Ո՞ր:

— В субботу (досл.: в субботний день), между полпятого и семью (я) свободна; ...

— Եթե ուզում ես, կհնդթատրոս: ?

— Կհնդնկարն ինչի՞ մասին է: ?

— Բարեկամության մասին: Հավանաբար սա իմ տեսած կհնդնկարներից ամենալավն (= ?) է:

— О дружбе. Может быть (вероятно), это наилучшая картина, увиденная мною.

— Սկզբից մինչև վերջ մեծ հետաքրքրությամբ է դիտվում:

— Смотрится с интересом от начала до конца.

— Անդրանիկ, փոքր քրոջս՝ Նարինեին էլ կարո՞ղ եմք մեզ հետ (հետներս) վերցնել: ?

— Չա ի՞նչ խոսք է (դա ի՞նչ ասելու բան է): Ամենայն (մեծ) սիրով: Մեզ հետ (հետներս) կտանենք:

— О чем речь (разговор)? С большим удовольствием! (Мы ее) возьмем (досл.: поведем) с собой.

Թող ինքն էլ գա, հաճույք ստանա:

Пусть (пускай) и она идет, получит удовольствие.

— Լավ: Որտե՞ղ հանդիպենք: ?

— Եկ (արի) շաբաթ օրը, ժամը հենց չորս(և) անց կեսին, մեր տան դիմաց հանդիպենք ?

Մանավանդ որ մեր գնալու տեղն այստեղից շատ մոտ է:

Тем более что ...

— Շան լավ պայմանա...

Վա՛յ, հեռախոսն անջատվեց. գրադված է տալիս: Տեսես Անդրանիկն ինչո՞ւ լսափողը կախեց:

Ой! Телефон отключился (отключили). Интересно, почему Андраник повесил трубку?

Արդյոք միջքաղաքայինն է:  
Может, это междугородная?

Հենց այդպես է, որովհետև հեռախոսի մյուս ծայրից ջուտով լսվում է. «... համա՛րն է. Երևանին պատասխանեցեք»:

Точно, потому что сразу же с другого конца телефона слышится: "Это номер ...? Отвечайте Еревану".

...Մի քիչ հետո Անահիտն է Անդրանիկին գանգահարում:  
...Чуть позже (спустя некоторое время) ...

— Կներես (ներիր), Անդրանիկ, միջքաղաքայինը հեռախոսագանգն անջատեց, մեր խոսակցությունն ընդհատեց:

— ... (это) междугородный телефонный звонок отключил (телефон), прервал наш разговор.

— Ուրեմն պայմանավորվեցիք: Մինչև շաբաթ: Տոտուն թյուն:

— Итак, (мы) договорились. До субботы! До свидания (пока)!

Таблица 48

- |              |             |   |                |                          |              |
|--------------|-------------|---|----------------|--------------------------|--------------|
| а. փստտի     | уверенный   | - | անփստտի        | неуверенный              |              |
| փստտիրեն     | уверенно    | - | անփստտիրեն     | неуверенно               |              |
| փստտուիթյուն | доверие     | - | անփստտուիթյուն | недоверие                |              |
| հանգիստ      | спокойный   | - | անհանգիստ      | неспокойный; беспокойный |              |
| հանգստացնել  | успокаивать | - | անհանգստացնել  | беспокоить               |              |
| б. գոհ       | довольный   | - | դժգոհ          | недовольный              |              |
| բախտավոր     | счастливый  | - | դժբախտ         | = անբախտ                 | несчастливый |

Прим.- Самый распространенный негативный префикс - ան-

Таблица 49

- |            |        |               |           |           |         |
|------------|--------|---------------|-----------|-----------|---------|
| իևձ հետ    | = հետս | со мной       | մեզ հետ   | = հետևերս | с нами  |
| քեզ հետ    | = հետդ | с тобой       | ձեզ հետ   | = հետևերդ | с вами  |
| նրա հետ    | = հետդ | с ним / с ней | նրանց հետ | = հետևերդ | с ними  |
| իր(են) հետ | = հետդ | с собой       | իրենց հետ | = հետևերդ | с собой |

Ср.: 1,2

Прим.- В контексте, согласно правилам русской речи, формы первых двух строк могут быть переведены и "с собой". Ср.: Իևձ հետ = հետս է գնում (Идет со мной) - Իևձ հետ = հետս եմ վերցնում (Беру с собой), Ձեզ հետ = հետևերդ է գնում (Идет с вами) - Ձեզ հետ = հետևերդ եք վերցնում (Берете с собой).

## Упражнения

1. Составьте предложения со следующими словами (используя их в нужной форме):

հանդիպել, ցանկանալ, մշակույթ, հնարավոր չէ, կարելի է, կարող եմ, միջև, չնայած (հակառակ նրան, որ), բարեկամություն, կինոնկար.

2. Образуйте антонимы следующих слов (48a.):

հաջող, հաջողություն, ազնիվ, ազնվորեն, հաշտ, համեստ, համեստորեն, համեստություն, առողջ, զգույշ (осторожный), զգուշորեն, զգուշություն.

3. Назовите антонимы следующих слов:

ա. դժվար, վրա, փոքր, երկար, ծեր, մոտ, բաց անել, գալ, սկսել;

б. դժբախտաբար, (կեսօրից) առաջ, հիմա, տաք, ծանր, մեծ, մոռանալ, գնել, իջնել (спускаться; снижаться);

в. էծան, ուշ, լավ, քիչ, թերևս, ծախ, վեղմ (անձրև), արթևանալ, երեկոյան.

4. Продолжите рассказ (попытайтесь включить в него и диалог):

Երեկոյան աշխատանքից տուն եմ գալիս: Հանկարծ դիմացս (իմ դիմացն) է դուրս գալիս բարեկամս, որին (ում) վաղուց չեմ տեսել...

5. Перескажите телефонный разговор (с кем-либо; пригласите его / ее куда-нибудь; он/она может согласиться или отказаться).

- ВИЗИТ ДРУГУ / ПОДРУГЕ  
 ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԵՇԱՄԻՆ  
 (ԲԱՐԵՇԱՄՈՒՀՈՒՆ)

Словарь

- այցելություն - визит; посещение  
 վատ (լավ) զգալ - чувствовать (себя) плохо (хорошо)  
 ինչ - что; ինչ վերաբերում է ...-ին - что касается ...  
 իմացած լինես, որ *ввод.* - знай, что; чтоб ты знал(а), что  
 ալեկորդ է - (из)лишне сказ.  
 նպատակ - цель  
 հյուր - гость(я)  
 ծանոթանալ - знакомиться; ծանոթացնել - ? (XI,24)  
 վերջապես (վերջիվերջո) *ввод.* - в конце(-то) концов  
 փեսացու - жених (парень девушки; см. XXI,44б.)  
 մի խոսքով *ввод.* - (одним) словом  
 ապագա - 1. с будущее 2. пр. будущий  
 փեսա - зять  
 հավատալ - верить  
 մինչև հիմա - до сих пор  
 պատկերացնել - представлять (себе)  
 շենք - здание  
 պողոտա - проспект  
 խաչմերուկ - перекресток  
 դիմավորել - встречать (*идти навстречу*)  
 ներս - во внутрь; в  
 բաշխել - стесняться  
 ներկայացնել - представлять  
 արևմտահայ - западный армянин  
 ուրախ եմ ծանոթանալու(ս) համար - рад(а) познакомиться!  
 բարո՛վ եք ելել - добро пожаловать!  
 ուրեմն [*урэмэн*] - *ввод.* выходит(, что)  
 բնիկ - коренной; родом из ...  
 արևելահայ - восточный армянин  
 թանկագին - дорогой  
 հյուրասիրել - угощать  
 խմիչք - спиртное  
 հրաժարվել - отказываться  
 ամաչեցնել - заставлять стесняться; стыдить  
 անդամ - член (*клуба, семьи...*)  
 դառնալ - становиться  
 կարմրել [*кармерэл*] - краснеть  
 խմորեղեն - мучное  
 առանձնանալ - уединяться; обособиться  
 հյուրասիրություն - угощение  
 ճանապարհ դնել - провожать (*от*)  
 թվալ - казаться  
 թե союз - что (*употребляется после թվում է, կարծում եմ*)  
 կասկածել - сомневаться



Անահիտը զանգահարում է Անդրանիկին. ?

— Այո՛, Անդրանիկ, բարև, այսօր ինչպե՛ս ես: Երեկ կարծես (թե) մի քիչ վատ էիր զգում: ?

— Բարև, Անահիտ, այսօր արդեն լավ եմ զգում: ?

— Անդրանիկ, այս երեկո ազատ ժամանակ ունե՛ս: ?

— Ի՛նչ կա, ինչո՞ւ ես հարցնում: ?

— Նախ դու ինձ ասա, ազատ ժամանակ ունե՛ս այսօր երեկոյան, թե՛ ոչ: ?

— Ինչ վերաբերում է ազատ ժամանակին, իհարկե ունեմ:

— Что касается свободного времени, ...

Իմացած լինես, որ քեզ համար միշտ ազատ ժամանակ ունեմ: Հարցնելի, ուրեմն, ավելորդ էր:

Знай, что... Так что излишне было спрашивать.

— Լավ: Ինչ վերաբերում է իմ հարցնելու նպատակին, պիտի խնդրեմ, որ մեզ այցելես (մեզ հյուր գաս):

— ...Что касается цели моего вопроса (доцл.: цели спрашивать), я должна попросить, чтобы ты нас навещал (приходил к нам в гости).

— Ինչո՞ւ չէ, ամենայն սիրով: Ռա ինձ համար հաճելի է, մեծ ուրախություն է: ?

— Իսկ ծնողների [բանոցներ] տանը լինելո՞ւ են: ?

— Իհարկե: Հենց իրենք են ցանկանում քեզ մի անգամ տեսնել, քեզ հետ (= ?) ծանոթանալ:

— ... Именно они хотят увидеть тебя хоть раз, познакомиться с тобой.

Վերջապես (վերջիվերջո), չէ՛ որ փեսացուս ես:

В конце(-то) концов, ты ведь мой жених.

Իմացած լինես, որ ոչ միայն ծնողներս, այլև ամուսնացած բոլորս ու եղբայրս են լինելու: ?

Մի խոսքով՝ բոլորն էլ ուզում են իրենց ապագա փեսային տեսնել, իրենց աղջկա ամուսնանալուց առաջ նրա հետ (= ?) մի անգամ գոնե խոսել:

Одним словом, все они хотят увидеть своего будущего зятя перед тем как их дочь выйдет замуж, хоть раз поговорить с ним.

— Օ, ինչ լավ է: Եթե այդպես է, անպայման կգամ: ?

Տեսես «քննություն» հացող կհանձնե՞մ: ?

Հավատա՛, Անահիտ, ձեր տան տեղը մինչև հիմա ճիշտ չգիտեմ: Պատկերացնո՞ւմ ես:

Поверь (мне), Анаит, до сих пор (я) точно не знаю, где ваш дом (досл.: местонахождение вашего дома). (Ты) представляешь (себе)?

— Եթե օպերայի շենքի կողմից գաս, Մաշտոցի պողոտայի և Թումանյան փողոցի խաչմերուկի աջ անկյունում կլինի:

— Если придешь (идти) со стороны здания оперы, (он) будет в правом углу перекрестка проспекта Маштоца и улицы Туманяна.

46 համարն է, հինգերորդ հարկում: Մեր շենքի առաջ անկյունում քեզ կդիմավորեմ: Ինչո՞վ ես գալու:

... (Я) встречу тебя перед нашим домом (зданием), на углу. На чем (досл.: с чем) приедешь?

— Հավանաբար ավտոբուսով (միկրոավտոբուսով): Ժամը ուրքե՛ս անց կեսին հարմար է: Ուրեմն, սիրելիս, մինչև երեկո:

— Наверное (вероятно), на автобусе (микроавтобусе). ...Итак, моя дорогая, до вечера!

— Անահիտ, ընկերոջդ ներս հրավիրիր: Հրամեցե՛ք, ներս եկե՛ք:

— Анаит, пригласи своего друга зайти (досл.: во внутрь). Пожалуйста (пожалуйста), заходите!

— Արի՛, Անդրանիկ, մի՛ քաշվիր:

— Иди, Андраник, не стесняйся!

— Բարև՛ ձեզ:

— Ձեզ ծանոթացնում եմ (ներկայացնում եմ) բարեկամիս՝ Անդրանիկ Կալայջյանին, ծագումով արևմտահայ, ուսանող, ապագա ինժեներ և... իմ փեսացուն:

— (Я) представляю вам своего друга - Андраника Калайджяна; родом - из Западной Армении, студент, будущий инженер и... мой жених.

— Ծանո ուրախ եմ ձեզ հետ (= ?) ծանոթանալու(ս) համար:

— Очень (весьма) рад с вами познакомиться.

— Է՛, բարով եք եկել: Ինչպե՞ս եք: Ուրեմն արևմտահայ եք: Իսկ մենք բնիկ արևելահայեր ենք, երևանցիներ:

— Ну, добро пожаловать! ... Выходит, (Вы) западный армянин. А мы коренные восточные армяне, ереванцы.

— Անահիտ, մեր թանկագին հյուրին հյուրասիրիր: Խմիչք կուզե՞ք:

— Анаит, угости нашего дорогого гостя...

— Ոչ: Նեղուօթուն մի քաշեք խնդրեմ: ?

— Մի հրաժարվեցեք խնդրեմ, Ձեզ ազատ զգացեք, ինչպես Ձեր տանը:

— Не отказывайтесь, пожалуйста. Чувствуйте себя (свободно), как дома (досл.: как в своем доме).

Վերջապես (= ?), շուտով մեր ընտանիքի անդամն եք դառնալու:

... скоро станете членом нашей семьи.

— Ղե՛, իմ Անդրանիկին մի ամաչեցրեք: Տեսնո՞ւմ եք, կարմրում է:

— Ну, не заставляйте моего Андраника смущаться (досл.: не стыдите). Видите, (он) краснеет?

Անդրանիկը խմորեղենից ուտում է, հյուրը խմում: Ասում է.  
Андраник ест мучное, ...

— Շնորհակալություն, երկուսն էլ շատ համով էին: ?

— Անուշ (լինի):

— На здоровье!

Սենյակներից մեկում առանձնանում են, բաժական գրուցում:

Уединяются...

Հետո Անդրանիկը պատրաստվում է գնալու: ?

— Այդ ո՞ւր: Մի շտապեք, մի քիչ էլ մնացեք:

— ... Куда Вы спешите, останьтесь еще немножко!

— Ոչ, ուշ է արդեն, գնամ: ?

— Անահիտ, ընկերոջդ ճանապարհ կդնե՞ս:

— Анаит, проводишь своего друга?

— Հյուրասիրության համար շնորհակալություն: Բարի գիշեր:

— Благодарю за угощение...

Անդրանիկը դրսում ասում է. ?

— Անահիտ, ճիշտն ասած՝ ձերոնց շատ հավանեցի: Թվում է, թե ազնիվ մարդիկ են:

— ... Они кажутся честными людьми.

- Հենց այդպես են:
- (Они) именно такие (и есть).
- Տեսնես իրենք էլ ինձ հավանեցին: ?
- Իհարկե: Մի կասկածիր: Գիշեր բարի:
- ... Не сомневайся. ...
- Միկն վաղը:

Таблица 50

a1. խոսել	говорить -	մի խոսիր	не говори!
		մի խոսեցեք	не говорите!
a2. մտնել	входить -	մի մտիր	не входи!
		մի մտեք	не входите!
a3. փախչել	убегать -	մի փախիր	не убегай!
		մի փախեք	не убегайте!
a4. վերցնել	брать -	մի վերցրու	не бери!
		մի վերցրեք	не берите!
б1. խաղալ	играть -	մի խաղա	не играй!
		մի խաղացեք	не играйте!
б2. մոռանալ	забывать -	մի մոռացիր	не забудь!
		մի մոռացեք	не забудьте!
б3. մոտենալ	приближаться -	մի մոտենիր	не приближайся!
		մի մոտեցեք	не приближайтесь!

Տր.: XI,24

Таблица 51

ա. Երևան	Ереван -	երևանցի	ереванец
Ռուսաստան	Россия -	ռուսաստանցի	россиянин
б. Իտալիա	Италия -	իտալացի	итальянец
Ֆրանսիա	Франция -	ֆրանսիացի	француз
քաղաք	город -	քաղաքացի	горожанин
в. Մարտունի	Мартуни -	մարտունեցի	мартуниец
Թիֆլիս	Тбилиси -	թիֆլիսեցի	тбилисец

### Упражнения

1. Օլիշիտե визит, нанесенный вами кому-нибудь.
2. Составьте предложения со следующими словами (в соответствующих формах):  
 ալվուր, մեքենա, ալվուրբուս, տրավելայ, տրոլեյբուս, գնացք (поезд),  
 ևալ (пароход), օդանավ (самолет).  
 Прим.- Каждый раз укажите не только куда, но и откуда едете.

3. Образуйте положительные и отрицательные формы повелительного наклонения (соответственно таблицам - XI, 25 и 50):

а. վազեցնել, նստեցնել, խմեցնել, արթնացնել, բարձրացնել, հարցնել, հաւնացնել:

б. պատասխանել, նստել, հազվել, վազել, զարմացնալ (удивляться), թռչել (летать), մտնել, թեթևանալ:

4. Дополните предложения, употребляя в них положительные и отрицательные формы повелительного наклонения данных глаголов (попеременно употребляйте формы единственного и множественного чисел):

Կանաչ (тихо) ..... (վազել), արագ .....:

Ուտելու ժամանակ դանակ ու պատառաքաղ ..... (օգտագործել), մատներդ .....

Պանդ ..... (պատասխանել), ուրիշ բան .....

Հեռուստացույց ..... (նայել), բայց երկար ..... որովհետև աչքի համար .....

Пример: Մաքուր գրիր (գրեցեք), կեղտոտ (грязно) մի գրիր (մի գրեցեք).

5. Скажите, откуда родом (из какой страны, какого города, какой деревни или какого района) ваши родители и предки?

Пример: предполагаемый вопрос:

— Ձերոնք բնիկ որտեղի՞ց եմ:

Օտաետ:

— Մեր նախնիներդ (предки) բնիկ Արևմտյան Հայաստանի Կեսարիա գավառից (провинция) եմ:

Blank lines for writing answers to exercises 4 and 5.

ПРОГУЛКА  
Ջ Բ Ո Ս Մ Ե Ք

Словарь

- գրուանք - прогулка  
 շաբաթապետը - уикэнд  
 կազմակերպել - организовать  
 անտառ - лес  
 գնացք [գәнацк] - поезд  
 ամբողջովին - целиком, полностью  
 դրսի [дәрсү] - внешний  
 վայելել *что?* - наслаждаться чем?  
 տոմս - билет  
 մի՛ մեկ կողմի - в одну сторону, в один конец  
 երթուղիորձի, երկու կողմի - туда-обратно, в два конца  
 վերադարձ - возвращение  
 ապահովել - обеспечивать  
 հիանալի - 1. пр. удивительный; замечательный; чудесный 2. и удивительно...  
 գնդակ [гәндәк] - мяч  
 ցանց - сетка  
 հոգնել [һокнэл] - уставать  
 քաղցածանալ - проголодаться  
 կրակ [кәрак] - огонь; կրակ վառել՝ անել - зажигать (разводить) огонь  
 խորրված - шашлык  
 զովացուցիչ - 1. пр. прохладительный 2. с прохладительное  
 արդ է *ввод.* - ясно, ясное дело  
 լուսանկարչական [լусանәкарчакан] արարար - фотоаппарат  
 լուսանկարել, նկարել - фотографировать  
 լուսանկար, նկար - фото(карточка)  
 հիշատակ - память (о ...); ի հիշատակ - в (на) память  
 դրսի *п/л* - вне  
 ճիշտ է *ввод.* - правда, хоть и, несмотря на то, что  
 վազվզել [вәзвәзэл] - бегать (туда-сюда)  
 ցատկոտել - подпрыгивать  
 հոգնածություն - усталость  
 բոլորովին + *отр.* - вовсе, отнюдь; ничуть  
 զգալ - чувствовать  
 քնդակառակ [кәnthакәfакә] - наоборот  
 ուժ - сила  
 կուտակել - набирать (аккумулировать)

Ընկերներով որոշեցինք այս շաբաթավերջին զբոսանք կազմակերպել (զբոսանքի գնալ):

Мы с друзьями решили организовать прогулку (поехать на прогулку) на этот уикэнд.

Մեր քաղաքի արվարձանում գեղեցիկ մի անտառ կա. այնտեղ էինք պտույտի գնալու:

...есть красивый лес; ...

Ասացինք, որ ավտոյով (ավտոմեքենայով, մեքենայով) կամ ավտոբուսով չենք գնալու, այլ գնացքով:

Мы сказали (себе), что поведем не на (авто)машине или автобусе, а поездом.

Այդպես ավելի հարմար է ու հաճելի. կարող ենք դրսի գեղեցիկ տեսարանները դիտել և դրանք ամբողջովին վայելել:

... и полностью наслаждаться ими.

Էլեկտրիչկայի տոմսեր առանք: Ոչ թե մի՛ մեկ կողմի, այլ երթուղարձի (երկու կողմի),

Взяли (купили) билеты на электричку (досл.: электрички). Не в одну сторону, а туда-обратно (в два конца),

...որպեսզի վերադարձի տոմսերն էլ ապահովենք:

...чтобы обеспечить (себе) и обратные билеты (досл.: билеты возвращения).

Մեկուկես ժամ հետո (մեկուկես ժամից) տեղ հասանք. արդեն անտառում էինք: ?

Բայց ինչ հիանալի անտառ: Միայն տեսնելը բավական է:

Но какой замечательный лес! ...

Հետներս (= ? - XXV,49) գնդակ ու ցանց էինք վերցրել: Գրեթե (համարյա) ամբողջ օրը խաղացինք, ուրախացանք:

... мяч и сетку. ...

Հետներս ձայնագրիչ էլ էինք տարել. երաժշտություն լսեցինք, պարեցինք, երգեցինք: ?

Ու երբ խաղալուց և պարելուց հոգնեցինք ու քաղցածացանք, մի քիչ հանգստացանք:

И когда устали от игр и танцев (досл.: играть и танцевать) и проголодались, ...

Հետո կրակ վառեցինք, խորոված արեցինք ու մեծագույն ախորժակով կերանք:

Потом зажгли (развели) огонь, пожарили (досл.: сделали) шашлык и с превеликим аппетитом поели.

Պարզ է, զինի (օդի, զարեջուր), զովացուցիչ խմեցինք:

Ясно, мы и ..., прохладительные напитки выпили.

Լուսանկարչական ապարատ ունեինք. նկարվեցինք (լուսանկարվեցինք),

У нас был фотоаппарат; сфотографировались,

...որպեսզի այդ օրից գոնե մի լուսանկար (նկար), մի հիշատակ մնա:

...чтобы (у нас) хоть одно фото осталось на память об этом дне (досл.: от того дня).

Ի հիշատակ այդ օրվա շատ նկարվեցինք (= ?):

Мы много фотографировались на память об этом дне.

Այդ օրը բաղաբից դուրս իրոք (որ) հիանալի ժամանակ անցկացրինք:

В тот день мы действительно провели чудесное время за городом.

Ավելի լավ, կարծում եմ, երբեք չէինք կարող հանգստանալ:

Лучше, я думаю, мы никогда не смогли бы отдохнуть.

Ճիշտ է, շատ խաղացինք, վազվզեցինք, ցատկոտեցինք, բայց բոլորովին հոգնածություն չզգացինք:

Мы, правда, много играли, бегали, но усталости вовсе (ничуть, отнюдь) не чувствовали.

Ընդհակառակը, ամբողջ եկող շաբաթվա համար ուժ հավաքեցինք:

Наоборот, силу набрали (набрались сил) на всю будущую неделю.

Таблица 52

a <sub>1</sub>	փոխեցի я изменил(а)...	փոխեցինք мы изменили...
փոխել	փոխեցիր փոխեց	փոխեցիք փոխեցին
a <sub>2</sub>	տեսա я увидел(а)...	տեսանք мы увидели...
տեսնել	տեսար տեսավ	տեսարք տեսան
a <sub>3</sub>	փախա я убежал(а)...	փախանք мы убежали...
փախել	փախար փախավ	փախարք փախան
a <sub>4</sub>	վերցրի я взял(а)...	վերցր(եց)ինք мы взяли...
վերցնել	վերցրիր վերցրեց	վերցր(եց)իք վերցր(եց)ին
	մոտեցրի я приблизил(а)...	մոտեցրինք мы приблизили...
մոտեցնել	մոտեցրիր մոտեցրեց	մոտեցրիք մոտեցրին
	լավացրի я улучшил(а)...	լավացրինք мы улучшили...
լավացնել	լավացրիր լավացրեց	լավացր(եց)իք լավացր(եց)ին
b <sub>1</sub>	խաղացի я сыграл(а)...	խաղացինք мы сыграли...
խաղալ	խաղացիր խաղաց	խաղացիք խաղացին
b <sub>2</sub>	հասկացա я понял(а)...	հասկացանք мы поняли...
հասկանալ	հասկացար հասկացավ	հասկացարք հասկացան
b <sub>3</sub>	մոտեցա я приблизился (-лась)...	մոտեցանք мы приблизились...
մոտեցալ	մոտեցար մոտեցավ	մոտեցարք մոտեցան

Միմ.- Спряжение в прошедшем времени (равно как и в повелительном наклонении) иррегулярных (неправильных) глаголов дается в словаре (в конце учебника).



Таблица 53

մեծ великий -	մեծագույն величайший
խոշոր крупный -	խոշորագույն крупнейший
բարձր высокий -	բարձրագույն (наи)высший; высочайший
լավ хороший -	լավագույն (наи)лучший

Ср.: XIII,28

Прим.- Превосходная степень любого качественного прилагательного может быть образована с помощью частицы *ամենից* или префикса *ամենա-*; суффикс *-ագույն* не очень употребителен. Напр.: *լավ - ամենից լավ = ամենալավ = ամագույն*, но: *բարձր (храбрый) - ամենից բարձր = ամենաբարձր (բարագույն - ?)*.

Таблица 54

ա. <i>ցատկել</i> прыгать -	<i>ցատկալուել</i> подпрыгивать
<i>թռչել</i> прыгать -	<i>թռչկալուել</i> скакать
<i>լուրել</i> ломать -	<i>լուրատել</i> разламывать
<i>լորել</i> резать -	<i>լորալուել</i> разрезать
б. <i>ծարել</i> треснуть -	<i>ծարծրել</i> растрескаться
<i>քաշել</i> тянуть -	<i>քաշքշել</i> дергаться
<i>վազել</i> бегать -	<i>վազվզել</i> бегать (туда-сюда)

Прим.- Как вы, наверное, заметили, значение итератива (многократности действия) в армянском выражается или с помощью суффиксов *-լու-*, *-կու-*, *-ալու-*, *-ալ-*, или путем дубликации глагольной основы – *ծարել - ծար + ծր + ել* (в этом случае происходит чередование гласных).

### Упражнения

1. Расскажите об одной вашей прогулке.

2. Скажите по-армянски:

(я) наслаждался (*վախելել*), (мы) посмотрели (*դիտել*), (мы) нашли (*գտել*), (я) вошел (*մտնել*), (они) преподнесли (*հրամցել*), (ты) поднял (*բարձրացել*), (он) проснулся (*արթնանալ*), (вы) удалили (*հեռացել*), (я) поговорил (*խոսել*), (ты) смог (*կարողանալ*), (они) поднялись (*բարձրանալ*), (вы) полюбили (*սիրել*), (вы) позаботились (*հոգալ*).

3. Образуйте превосходную степень (во всех трех вариантах):

*ծանր, թեթև, հաջող, պարզ, համեստ, երկար, հարմար, էժան, հզոր* (мощный), *ուժեղ*.

Пример: *ազնիվ - ամենից ազնիվ, ամենաազնիվ, ազնվագույն*.

Н А Д А Ч Е  
ԱՄԱՆԱՆՆՅՈՒՄ

Словарь

- ամառանոց - дача  
 հյուսիս - север  
 գտնվել [գտնվեալ] - находиться  
 հարավ - юг  
 ճիշտ, ուղիղ - прямо  
 հակառակ - противоположный  
 չգիտեմ ինչու ետօժ. - не знаю почему (отчего, с чего это)  
 ամեն անգամ, երբ - каждый раз, когда  
 քարե - каменный, из камня  
 ցանկապատ - забор; ограда  
 շուրջը - вокруг  
 ծաղկանոց - цветник  
 գույնզգույն [գյւնազգյւն] - разноцветные  
 գույն - цвет; ամեն գույնի - любого цвета  
 վարդ - роза  
 մեխակ - гвоздика (цветок)  
 շուշան - лилия  
 թրաշուշան - гладиолус  
 քաջվարդ - пион  
 քրիզանթեմ - хризантема  
 բույր - аромат  
 վարդագույն - розовый  
 դեղին - желтый  
 կապույտ - синий; голубой  
 մանուշակագույն - фиолетовый  
 սրճագույն [սաքսագյւն] - коричневый  
 բազմաթիվ - многочисленный  
 երանգ - оттенок  
 բուրել - благоухать; пахнуть  
 հետևում - позади; за  
 տեսակ-տեսակ + մն. - разного рода, разнообразный  
 պտղատու [թտղատու] - фруктовый  
 ծառ - дерево  
 խնձորենի [խնձորենի], խնձորի ծառ - яблоня  
 տանձենի, տանձի ծառ - груша (грушевое дерево)  
 սալորենի, սալորի ծառ - слива (дерево)  
 խնձոր - яблоко  
 տանձ - груша  
 սալոր - слива  
 թուփ - куст  
 աճել - расти  
 հատապտուղ [հատապտուղ] - ягода  
 հաղարջ - 1. смородина 2. крыжовник

- ելակ - клубника
- մոր - земляника
- մոջ - ежевика
- մորի - малина
- բաղել - рвать, срывать
- ախր [эхэр] - же; ведь
- անհամբեր - 1. пр. нетерпеливый 2. и нетерпеливо
- մի տեսակ - своего рода; как-то; что-то
- ագարակ - ферма
- ոչխար - овец; овца
- ալծ - козел; коза
- խոզ - свинья
- կով - корова
- հավ - курица
- աքլոր - петух
- հնդկահավ [հանкаհав] - индюк; индейка
- ծի - конь; лошадь
- պահել - разводить; держать
- շուն - пес; собака
- կատու - кот; кошка
- լսող - послушный, смир(ен)ный
- կենդանի [кэнтани] - животное
- քսել [кэсэл] - тереться; потираться
- շոյել - гладить; ласкать
- խելոց - тихий, смир(ен)ный
- հաչել - лаять
- ով (որ) - кто
- գոհ մնալ - оставаться довольным
- բարի - добрый
- հյուրասեր - гостеприимный

Հորեղբորս ամառանոցը բաղաբից հյուսիս է (գտնվում), իսկ մենք հարավում ենք ապրում, ճիշտ (ուղիղ) հակառակ կողմում:

Дача моего дяди находится к северу от города, а мы живем на юге, прямо на противоположной стороне.

Թե՛ն մի քիչ հեռու է, բայց միշտ հաճույքով ենք այնտեղ գնում: ?

Զգիտեմ ինչու, այդ ամառանոցը բոլորս շատ ենք սիրում:  
He знаю почему, ...

Ամեն անգամ, երբ այնտեղ ենք գնում, շատ ուրախ ժամանակ ենք անցկացնում:  
Каждый раз, когда ...

Այդ ամառանոցը բարե, սպիտակ, գեղեցիկ մի տուն է՝ երկու կողմից պատշգամբներով, ցանկապատով, շուրջը՝ այգի:  
... каменный (из камня), ..., с забором, вокруг (него) - сад.

Տան առաջ հիանալի մի ծաղկանոց կա:  
Перед домом - (есть) замечательный цветник.

Այնտեղ կարող եք ամեն գույնի (գույնզգույն) ծաղիկներ տեսնել.

...увидеть цветы любого цвета (разноцветные):

...թե՛ վարդ և մեխակ, թե՛ շուշան և թրաշուշան, թե՛ քաջ-  
վարդ և քրիզանթեմ...

... розу и гвоздику, лилию и гладиолус, пион и хризантему...

Ինչ (ինչպիսի) գույներ և բույրեր. էլ կարմիր և վարդագույն,  
էլ դեղին և կապույտ, էլ մանուշակագույն և սրճագույն...

А какие цвета и ароматы! И красный и розовый, и желтый и  
синий (голубой), и фиолетовый и коричневый...

Եվ դրանցից ամեն մեկը՝ բազմաթիվ երանգներով:

И у каждый из них - множество оттенков.

Ու քանի որ այդ ծաղիկները տարբեր ժամանակներում են  
ծաղկում (բացվում), գարնանից մինչև համարյա ուշ աշուն  
բուրում են.

И так как цветы эти цветут (раскрываются) в разное время (в  
разные времена), (они) благоухают...;

...դրանցից կարող եք հոտ քաշել, դրանց գույները և բույրը  
վայելել: ?

Տան հետևում տեսակ-տեսակ պտղատու ծառեր կան. էլ  
խնձորենիներ, էլ տանձենիներ, էլ սալորենիներ...

За домом - фруктовые деревья: яблони, груши, сливы...

Այնպես որ խնձոր, տանձ կամ սալոր այլևս (էլ) շուկայից  
չենք անում (= ?): ?

Եվ ոչ միայն դրանք, այլև թփերի վրա աճող շատ հատա-  
պտուղներ՝ հաղարջ, ելակ ու մոր, մոշ ու մորի...

...растущие на кустах ягоды - смородину, крыжовник, клубнику  
и землянику, ежевику и малину...

Մենք՝ փոքրերս (սր.: XVIII, բոլորս), շատ ենք սիրում մեր  
ձեռք(եր)ով քաղել դրանք և նույնիսկ առանց լվալու ուտել.  
ախր մենք անհամբեր ենք:

Мы - детвора - очень любим срывать их своими руками и даже  
есть немывыми; мы же (ведь) нетерпеливые.

\*\*\*

Բայց հորեղբորս ամառանոցը ոչ միայն ամառանոց է, այլև  
մի տեսակ ագարակ:

... своего рода ферма.

Հորեղբայրս պահում է ոչխար, այծ, խոզ, կով, հավ (սա  
տանց արջորի չի լինում), հնդկահավ, ձի:

(Мой) дядя разводит овец, коз, свиней, коров, кур (они без пету-  
хов не бывают!), индюков, лошадей.

Ամեն մեկից՝ քիչ, բայց պահում է:

... - понемногу, ...

Ու դեռ տանն էլ շուն, կատու է պահում: Շատ հնազանդ կեն-  
դանիներ են:

... держит собаку, кошку. Они очень послушные животные.

Անձամբ ես, օրինակ, ավելի շատ սիրում եմ կատվի հետ  
խաղալ:

Например, лично я больше люблю с кошкой играть.

Չափս է, ոտքերիդ (=?) քսվում, ուզում է, որ ականջների  
հետևը շոյես:

..., трется о твои ноги: ... ты погладил(а) (ее) за ушками.

Շունն էլ խելոք է. ուրիշների վրա հաչում է, բայց չի կծում:

И собака тихая (смирная); лает на других (чужих), но не кусается.

Ով որ հորեղբորս ամառանոց-ագարակն այցելի, շատ գոհ  
լվնա [каменя]:

Кто посетит дачу-ферму (моего) дяди, останется очень (весьма)  
довольным.

Սանազանդ որ նա բարի, հյուրասեր մի մարդ է:

Тем более что он человек добрый и гостеприимный.

#### Таблица 55

խնձոր	яблоко	-	խնձորենի	яблоня
տանձ	груша	-	տանձենի	груша (дерево).
սալոր	слива	-	սալորենի	слива
ընկույզ	орех	-	ընկույզենի	орешник

#### Таблица 56

ուկի	золото	-	ուկե	=	ուկյա	золотой, из золота
մարմար	мрамор	-	մարմարե	=	մարմարյա	мраморный...
մետաքս	шелк	-	մետաքսե	=	մետաքսյա	шелковый...
ալյակի	стекло	-	ալյակե	=	ալյակյա	стеклянный...
քար	камень	-	քարե			каменный...

Прим.- В этой конструкции суффикс -ե более употребляем.

Упражнения

1. թարգմանել:

- a. Լույսը վաղուց բացվել էր<sup>1</sup>,  
 Բայց կատուն լվացված չէր.  
 Չէր սաւերել մազն ու բեղը<sup>2</sup>,  
 Չէր հարդարել իր տեղը:  
 Քնած էր դեռ իր մեջքին:  
 Ինչ լավ օր է կիրակին:

1. рассвело 2. ед. ч. - усы

- б. Ուսուցիչ. – Ո՞ր կենդանիները չորս ոտք ունեն:  
 Աշակերտ. – Շունը, կատուն, կովը...  
 Ուսուցիչ. – Ուրի՞շ:  
 Աշակերտ. – Երկու հավը:

2. Опишите ферму, на которой вы побывали.

3. Расскажите о любимом животном.

4. Дополните:

- Իմ սիրած գույնը .....ն է:
- Իմ սիրած ծաղիկը .....ն է:
- Իմ սիրած կենդանին .....ն է:
- Իմ չսիրած ճաշը .....ն է:
- Իմ սիրած միրգը .....ն է:
- Տարվա մեջ իմ սիրած եղանակը .....ն է:
- Իմ սիրած զբաղմունքը (хобби) .....ն է:
